ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2017թ. հոկտեմբերի 3-ից 4-ը Ռուսաստանի Դաշնություն
(Մոսկվա) գործուղման

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**
   Աշոտ Մանուկյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**
   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ / ԺԱՄԿԵՏԸ</u>**
   Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), հոկտեմբերի 3-ից 4-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**
   Ռուսաստանի Դաշնության էներգետիկայի նախարար

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**
   Մասնակցություն էներգետիկայի զարգացման և էներգաարդյունավետության վերաբերյալ «Ռուսաստանյան էներգետիկ շաբաթ» միջազգային համաժողովին

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**
   Տեղի են ունեցել քննարկումներ համաժողովի օրակարգով նախատեսված հետևյալ հարցերի շուրջ՝ Էներգետիկան գլոբալ զարգացման համատեքստում, վառելիքաէներգետիկ բնագավառ. ազգային շահեր և համընդհանուր միտումներ, էլեկտրաէներգետիկայի ապագան, ինչպես են փոխվում էներգահամակարգերը և էներգասպառողները, ատոմային էներգետիկայի դերն ու հեռանկարները միջազգային էներգետիկ հաշվեկշռում:

7. **<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   Հանդիպում է կայացել ՌԴ էներգետիկայի նախարարի տեղակալ Ա.Յանովսկու հետ: Համաժողովի շրջանակներում տեղի է ունեցել առանձնազրույց ՌԴ էներգետիկայի նախարար Ա. Նովակի հետ: Քննարկվել են նաև ՀՀ-ՌԴ համագործակցության հեռանկարները էներգետիկայի բնագավառում, մասնավորապես՝ ՀԱԷԿ երկրորդ էներգաբլոկի երկարացման ծրագրի ընթացքը և ընթացիկ արդյունքները: Քննարկվել են նաև գազամատակարարման և էներգամատակարարման համակարգերում «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության դրամական հոսքերի հաշվարկի մոդելների հետ կապված հարցերը:

8. **<u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>**

ՌԴ էներգետիկայի նախարարության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել գազամատակարարման և էներգամատակարարման համակարգերում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ դրամական հոսքերի հաշվարկի մոդելի ստորագրման վերջնաժամկետը երկարաձգել մինչև 2018թ. նոյեմբերի 1-ը:

9. **<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>**

Շարունակել աշխատանքները նախանշված և ձեռքբերված պայմանավորվածությունները իրականացնելու ուղղությամբ:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ **ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

05.10.2017թ.